

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱԴԱՆ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

**ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ  
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՈՒՄ**

**ИНОСТРАННЫЕ ЯЗЫКИ В ВЫСШЕЙ ШКОЛЕ  
FOREIGN LANGUAGES IN HIGHER EDUCATION**

Գիտական հանդես  
Научный журнал  
Scientific Journal



**2 (19)**

**Երևան – 2015**

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ  
Вестник издается по решению Ученого совета ЕГУ  
The Bulletin is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ ր.գ.դ., պրոֆ. Երզնկյան Ե.Լ.

Խմբագրական խորհուրդ.

ր.գ.դ., պրոֆ. Գասպարյան Ս.Բ., ր.գ.դ., պրոֆ. Գաբրիելյան Յու.Ս., ր.գ.դ., պրոֆ. Մակարյան Ա.Ա., ր.գ.դ., պրոֆ. Պարոնյան Շ.Հ., ր.գ.դ., դոց. Մինոնյան Ա.Ա., ր.գ.դ., դոց. Առաքելյան Ա.Հ., ր.գ.թ., դոց. Բաղդասարյան Հ.Գ., մ.գ.թ., դոց. Կարապետյան Կ.Ս., մ.գ.թ., դոց. Հարությունյան Ջ.Հ., դոց. Թովմասյան Ն.Ս. (պատասխանատու քարտուղար):

Главный редактор: д.ф.н., проф. Ерзинкян Е.Л.

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Гаспарян С.К., д.ф.н., проф. Габриелян Ю.М., д.ф.н., проф. Макарян А.А., д.ф.н., проф. Паронян Ш.А., д.ф.н., доц. Симонян А.А., д.ф.н., доц. Аракелян А.Г., к.ф.н., доц. Багдасарян А.Г., к.п.н., доц. Карапетян К.М., к.п.н., доц. Арутюнян З.Г., доц. Товмасын Н.М. (ответ. секретарь).

Editor-in-chief: Doctor in Philology, Prof. Yerznkyan Y.L.

Editorial Board:

Doctor in Philology, Prof. Gasparyan S.K., Doctor in Philology, Prof. Gabrielyan Y.M., Doctor in Philology, Prof. Makaryan A.A., Doctor in Philology, Prof. Paronyan Sh.H., Doctor in Philology, Associate Prof. Simonyan A.A., Doctor in Philology, Associate Prof. Arakelyan A.H., PhD, Associate Prof. Baghdasaryan H.G., PhD, Associate Prof. Karapetyan K.M., PhD, Associate Prof. Harutyunyan Z.H., Associate Prof. Tovmasyan N.M. (Executive Secretary).

«Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հաղեսն ընդգրկված է ատենախոսությունների արդյունքների տպագրման համար ընդունելի ամսագրերի ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի ցանկում:

Научный журнал «Иностранные языки в высшей школе» включен в список периодических изданий, допущенных Высшей аттестационной комиссией РА для публикации результатов диссертационных работ.

Scientific journal "Foreign Languages in Higher Education" is included in the list of journals approved by RA Supreme Certifying Commission to publish the main findings of dissertations.

ԸՆԹԵՐԳՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՏԵՔՍԸ ԸՄԲՈՆԵԼՈՒ  
ՌԱԶՄՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Ընթերցման միջոցով տեքստը ըմբռնելու ռազմավարությունը օտար լեզվի գործնական իմացության հիմքում է: Որպեսզի ուսանողները ավելի արագ և հեշտ ընկալեն ընթերցածը, դասավանդողը պետք է ճշգրիտ ուղղորդի այդ գործընթացը: Հողվածում նշված են տեքստն ըմբռնելու քայլերը, որոնք դիտարկվում են առանձին-առանձին: Յուրաքանչյուր քայլի համար ներկայացված են ոչ միայն սպասվելիք արդյունքները, այլև անհրաժեշտ վարժությունների համակարգը այդ քայլերն իրականացնելու համար: Հողվածում նշված ռազմավարությունները չեն սահմանափակվում մեկ լեզվով: Չնայած նրան, որ հիմնական նյութն անգլերենն է, այն կարելի է կիրառել ցանկացած լեզվով տեքստի վրա աշխատելիս:*

**Քանալի բառեր** ընթերցանության տեսակները, ճանաչողական ընթերցանություն, ուսումնական ընթերցանություն, որոնողական ընթերցանություն, տեքստի ըմբռնում

Ընթերցելու միջոցով սովորողը հարատացնում է լեզվական պաշարը: Ընթերցածը հասկանալու կարողությունը զարգացնելու համար, ցանկալի է ուսանողներին ակտիվ ընթերցողների վիճակում դնել: Այդ նպատակով, մինչև տեքստի ընթերցումը, նրանց պետք է տալ կոնկրետ առաջադրանքներ, որոնք կմոտեցնեն նրանց տեքստին:

Ուսանողները տրված խնդրին համապատասխան, կսովորեն օգտագործել թե՛ ընթերցելու տարբեր ռազմավարությունները, թե՛ տեսակները (ճանաչողական, հետազոտական, որոնողական):

Ճանաչողական ընթերցանության (scanning/global reading) /Alderson, 2002: 10-11/ դեպքում ուսանողները դիտարկում են տեքստի կառուցվածքը, վերնագիրը, պարբերությունները, պատկերազարդումները, մակագրությունները, ընդգծված բառերը՝ կանգ չառնելով անձանոթ բառերի վրա:

Ուսումնական (հետազոտական) ընթերցանության (detailed reading) /Alderson, 2002: 28-31/ դեպքում ուսանողները առաջին անգամ կարդալիս ամբողջությամբ ծանոթանում են տեքստին: Բարդությունները հաղթահարելու համար վերընթերցում են անհասկանալի, բարդ կամ կարևոր մասերը: Համատեքստի, փորձառության կամ բառարանի միջոցով ճշտում են անձանոթ բառերի նշանակությունը:

Որոնողական ընթերցանության դեպքում (selective reading) սովորողները /Աստվածատրյան 1985, 24-31/ կոնկրետ տեղեկատվությունը գտնելու նպատակով ուսանողները արագ վերընթերցում են տեքստը, փնտրում հենարաններ՝ հանգուցային բառերը, պարբերությունների առաջին նախադասությունները, խորագրերը, մեկնաբանությունները, սխեմաները, աղյուսակները և այլն:

Որոնողական (մանրամասն) ընթերցանությամբ հասկանալը ավելի հազվադեպ է հանդիպում և գործածվում է սահմանափակ շրջանակում (օր՝ դեղատոմսում):

Առավել հաճախ հանդիպող երևույթ է հետազոտական ընթերցանությունը, եթե հատկապես պահանջվում է տեղեկատվություն՝ որոշակի ոլորտի կամ խնդրի մասին: Ճանաչողական (հետազոտական) ընթերցանությունը հանդիսանում է ընթերցելով հասկանալու բոլոր տեսակների առանցքային տեսակը: Կախված այն բանից, թե ընթերցանությունը ինչ նպատակ է հետապնդում, օգտագործվում է համապատասխան ընթերցանության տեսակը:

Այժմ կներկայացվեն տեքստը հասկանալով ընթերցելու ռազմավարությունները, որոնցից կարելի է օգտվել բոլոր տեսակի տեքստերի դեպքում:

#### Քայլ I – Նախապատրաստական փուլ

Տեքստը հասկանալու համար շատ կարևոր դեր են խաղում նախնական գիտելիքները: Հարկավոր է ուսանողներին փոխանցել այն զգացողությունը, որ նրանք դեռևս նախքան տեքստը ընթերցելը արդեն շատ ավելի բան գիտեն այդ տեքստի վերաբերյալ, քան իրենք կարծում են: Եվ եթե մենք հենվենք մեր ուսանողների նախնական գիտելիքների վրա, կարող ենք առաջացնել տեքստի հանդեպ հետաքրքրություն, այն ընթերցելու պատրաստակամություն, ինչպես նաև կբարձրացնենք մոտիվացիան և այդ ամենով կբաջալերենք նրանց: Դրանում մեզ կարող են օգնել ասոցիոգրամները, մտագրոհը (brainstroming), վերնագիրը, ենթավերնագրերը, տեքստի վերաբերյալ նկարները, պատկերները, անգամ տեքստի տեսակը:

Տարբեր տարրերի օգնությամբ (վերնագիր, պարբերությունների սկիզբ, հանգուցային բառեր, պարբերություններից մեկը, ընդգծված բառեր), ուսանողները կարծիք են հայտնում տեքստի բովանդակության մասին: Դիտարկենք վերոհիշյալը առանձին-առանձին.

ա) Նախնական գիտելիքները կարելի է վեր հանել ասոցիոգրամների միջոցով. Օր.՝

գրատախտակին գրում ենք թեմայի անունը և գրի առնում ուսանողների առաջին զգացողությունները (պատկերացումները) այդ թեմայի շուրջ:

բ) Ցուցադրում ենք թեմատիկ նկարներ և առաջարկում ուսանողներին նկարների միջոցով տեքստի վերաբերյալ որոշակի մտահաղացումներ կատարել՝

- ո՞րն է տեքստի թեման.

- ովքե՞ր են տեքստի գործող անձինք.

- ինչի՞ մասին է տեքստում խոսվում.

- առանձնացնել ստեղծագործության սյուժեի զարգացման աստիճանները (սկիզբը, դեպքի ընթացքը, ավարտը):

գ) Մտագրոհը աշխատանքային մի մեխանիզմ է, որի ժամանակ քննարկվում և առաջարկվում են տարբեր կարծիքներ ու մոտեցումներ: Այն օգնում է, որ ուսանողները պատկերացում կազմեն տվյալ ոլորտի մասին: Ուսանողներին առաջարկվում է ազատ մտածել, որից հետո հանպատրաստից ի մի բերել

իրենց մտքերը: Որպեսզի ստեղծվի ստեղծագործական մթնոլորտ, խրախուսվում են տարբեր կարծիքներ: Ուսանողների մտքերի և գաղափարների անկանոն հավաքագրումից հետո կարելի է դրանք դասավորել ըստ որոշակի հասկացությունների:

դ) Գրատախտակին գրում ենք վերնագիրը, այնուհետև առաջարկում ենք ուսանողներին, ելնելով վերնագրից, հիպոթեզներ առաջ քաշել տեքստի բովանդակության վերաբերյալ:

ե) Կոնկրետ տեղեկատվություն գտնելու նպատակով՝ ուսանողները դիտարկում են ողջ տեքստը, դրա բառային և ոչ բառային կառուցվածքային տարրերը (օր., վերնագիր, խորագիր, մակագրություն, պարբերություն, սյունակ, լոգո, տառատեսակ և այլն) և գործածում դրանք որպես հենարան:

զ) Առաջադրում ենք հարցեր տեքստի տեսակի վերաբերյալ: Օր.՝

- Որտեղի՞ց է վերցված տեքստը:

- Ի՞նչ տիպի տեքստ է՝ գովազդ, հեքիաթ, հոդված:

Տեքստի տեսակը շատ կարևոր է, որովհետև դրանով ենք որոշում ընթերցանության տեսակը՝ ճանաչողական, հետազոտական, թե՛ որոնողական:

Այսպիսով, պետք է ուսանողներին բացատրենք, որ նրանք նախքան տեքստն ընթերցելը պետք է ուշադրություն դարձնեն վերնագրին, նկարներին, պատկերներին: Նման նախնական աշխատանքը կօգնի ուսանողներին ծանոթանալ տեքստին՝ դրանով իսկ փարատելով ուսանողների անհանգստությունն ու մտավախությունը:

Քայլ II – Աշխատանք տեքստի հետ

Որպես 2-րդ քայլ հանդիսանում է անմիջական տեքստային աշխատանքը: Այն իր մեջ ներառում է հետևյալ տեսակները:

ա) Տեքստի պարզեցում՝

• Տեքստի բովանդակությունից անկախ հարցերի միջոցով, այլ կերպ ասած՝ հարցեր, որոնք ուղղակի արձանագրում են՝

- փաստը,

- իրադարձությունը,

- միտքը,

- գործողության ժամանակն ու տեղը և այլն:

Ուսանողները կարող են հետազայում այս հարցերը յուրաքանչյուր նոր տեքստի դեպքում կիրառել և յուրաքանչյուր նոր տեքստ ինքնուրույն հասկանալ:

• Տեքստի բովանդակության հետ առնչվող հարցերին պատասխանելու միջոցով:

Դրանք այն հարցերն են, որոնք տեքստից հետո են դրված: Նման հարցերը կարդացածը հասկանալու ստուգման ամենատարածված առաջադրանքներից են:

• Տեքստի պարզեցում բառ-բանալիների միջոցով:

Տեքստի գլխավոր տեղեկատվությունը պարունակող բառ-բանալիները կարելի է գտնել տեքստի կամ սկզբում կամ վերջում: Բառ-բանալիները կապված են թեմայի հետ և հաճախ գտնվում են հենց վերնագրերի մեջ: Նրանք հաճախակի կրկնվում են, կամ փոխակերպված են և շատ հաճախ հանդես են գալիս որպես գոյական: Օր՝.

Ecology – էկոլոգիա

Environment – շրջակա միջավայր

Pollution – աղտոտվածություն

Industrial waste – արդյունաբերական թափոններ

Economic activities – տնտեսական գործունեություն

Nuclear waste – միջուկային թափոններ

Contamination – թունավոր նյութեր

Rainforest – անձրևաշատ անտառներ

Endangered species – վտանգված տեսակներ

Habit – սովորություն

Ցանկացած, մանավանդ դժվարին և երկար տեքստերի վրա աշխատելիս, շատ օգտակար կարող է լինել տեքստի բաժանումը ըստ իմաստային մասերի: Այդ պատճառով առաջադրանք ենք տալիս.

- Տեքստը բաժանել իմաստային մասերի (ենթաթեմաների) և վերնագրել դրանք: Այս աշխատանքի արդյունքում տեքստի բովանդակությունը դառնում է ավելի ամբողջական և հասկանալի:

- Հայտնաբերել տեքստի տարբեր մասերի միջև առկա տրամաբանական կապը (պատճառ, հետևանք, նպատակ, հակադրություն, պայմանականություն և այլն):

- Առանձնացնել սյուժեի զարգացման աստիճանները (սկիզբը, հանգույցը, զարգացումը, գագաթնակետը, հանգուցալուծումը, ավարտը):

բ) Տեքստի իմաստային բաժանումը կարելի է կատարել շաղկապների կամ կապական բառերի միջոցով (օր՝ and, that’s why, because, otherwise, though):

Խոսքը գնում է ոչ թե այս բառերի իմաստի մասին, այլ նրանց գործառնությունների մասին: Օր՝ “that’s why”-ը մատնանշում է, որ տեքստի այս հատվածը ներառում է հիմնական գաղափարի հետևանքային կապը: Իսկ “otherwise”, “but”, “nevertheless” բառերը մատնանշում են հակադրություն:

Ուսանողները, որոնք արդեն սովորել են օտար լեզվով տեքստ կարդալու ժամանակ ուշադրություն դարձնել շաղկապների վրա, կարող են հետևել տեքստի կազմությանը, քայլ առ քայլ հետևել նրա իմաստային և տրամաբանական կառուցվածքին:

Ընթերցելով հասկանալու արդյունավետ միջոցներից են՝

- Նշումները, որոնք կարող են արվել լուսանցքում կամ գրվել կետերով:

Օր՝

Խնդիր –

Պատճառ –

- Օրինակ –
- Արդյունք –
- Կամ`
- Ներածություն –
- Գլխավոր տեղեկատվություն –
- Ավարտ –
- Փոխներգործուն ընթերցանության նշանները.
- V – հայտնի է
- + – հետաքրքիր է
- – անհավանական է
- ? – կարելի է մանրամասն իմանալ

**Քայլ III – Բառերի բացատրություն**

Մենք գիտենք, որ բառերը, որոնք մենք ինքներս ենք գտնում, ավելի երկար են պահպանվում հիշողության մեջ, քան այն բառերը, որոնց նշանակությունը կամ բացատրությունը նախապես է տրված լինում: Այդ նպատակով հարկավոր է տանել համապատասխան աշխատանք, որպեսզի ուսանողները կարողանան սեփական ուժերով կռահել անծանոթ բառերի նշանակությունը:

Անծանոթ բառերը կռահելու չորս ռազմավարությունները`

- 1) Ինչի՞ մասին է խոսքը գնում:
- 2) Տեքստի ո՞ր բառերի հետ է անծանոթ բառը իմաստով համակցված:
- 3) Կա՞ կապ տեքստի մյուս մասերի անծանոթ բառերի հետ:
- 4) Փորձեք անծանոթ բառը տեսնել համատեքստի մեջը, ըմբռնել նրա իմաստային կապը համատեքստի մյուս անդամների հետ. Ինչպիսի՞ գաղափարներ, զգացողություններ, ենթադրություններ եք ունենում: Եվ միայն վերջում է օգնության գալիս բառարանը:

**Քայլ IV – Ընթերցելով հասկացածի ստուգում**

ա) Multiple-choice վարժություններ (բազմընտրական) – տրվում է հարցը և պատասխանի մի քանի տարբերակ, առաջարկվում է դրանցից ընտրել ճիշտը:

բ) Ճիշտ/սխալ վարժություններ – տրվում են տեքստի բովանդակությանն առնչվող ճիշտ և սխալ պնդումներ, առաջարկվում է տարբերակել դրանք:

գ) Համապատասխանեցնող վարժություններ – առաջարկվում է կարդալ տեքստը և առաջադրանքում տրված նախադասությունների մեջ նշել տեքստի բովանդակությանը համապատասխանողները:

դ) Կարճ պատասխանով առաջադրանքներ – ընդհանուր բառախմբից գտնել ճիշտ բառը և լրացնել տեքստը:

ե) Տրամաբանական – տրվում են տեքստի բովանդակությանն առնչվող հարցեր, որոնք նպատակ ունեն բացահայտել, ասենք` պատճառահետևանքային կապերը, գործողությունների տրամաբանական ընթացքը և այլն:

Քայլ V – Անցում ընթերցելուց գրելուն կամ խոսելուն

Տեքստը ընթերցման միջոցով ըմբռնելու ռազմավարությունը ամբողջական դարձնելու համար հարկավոր է ամրապնդել ընթերցելով հասկացածը: Այդ իսկ պատճառով ուսանողներին տրվում են որոշակի առաջադրանքներ: Օր.՝

- անավարտ տեքստերի ավարտում,
- նույն տեքստի վերարտադրությունը մեկ այլ անձի տեսանկյունից,
- սեփական փորձից ելնելով տեքստի մեկնաբանություն:

Որպես ամփոփիչ աշխատանք հիմնականում ուսանողներին տրվում է առաջադրանք՝

- սեփական տեքստի ստեղծում

Անցումը տեքստ ստեղծելուն պետք է լինի սահուն և սկսվի տեքստի ենթավերնագրերը, տեքստի վերաբերյալ նշումները՝ բառ-բանախմբեր, ընդգծումներ, կետեր, գլխավոր մտքեր հայտնաբերելուց: Շատ կարևոր է, որ տեքստը հասկանալու և տեքստ ստեղծելու ժամանակ արված սխալներին դասախոսները խիստ չմոտենան: Ավելի զգույշ և տարբերակված ուղղումները (իհարկե ոչ ամեն դասի և ոչ բոլոր դեպքերում) ստեղծում են կարևոր նախապայմաններ, որպեսզի ուսանողները կարողանան անկաշկանդ աշխատել: Դասախոսը պետք է այդ աշխատանքում կարողանա քաջալերել ուսանողներին:

Որպես սեփական տեքստի տարբերակներ կարող են առաջարկվել՝

- նման այլընտրանքային տեքստի ստեղծում,
- գրել նամակ, որում կպատմվի այդ տեքստի մասին,
- գրել հեռագիր,
- գրել բաց նամակ հրատարակչությանը, կրթության նախարարությանը,
- վարել հարցազրույց:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստվածատրյան Մ. Օտար լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1985:
2. Լեզուների իմացության / իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Երևան, 2005:
3. Հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր, Երևան, 2009:
4. Երզնկյան Ե., Հովհաննիսյան Գ., Առաքելյան Մ., Կարապետյան Մ. Ուսուցիչների հնգօրյա վերապատրաստումների ծրագրեր և նյութեր, Երևան, Անտարես, 2008:
5. Նախագծերի իրականացում <http://ganjalyanyura.wordpress.com/2015/03/>
6. Фоломкина С. К. О работе над компонентами чтения // *Иностранные языки в высшей школе*, вып. 14. Москва, 1979.
7. Alderson J. Ch. Assessing reading. Cambridge: Cambridge University Press, 2002.



**Л. АЙТЯН – О стратегиях восприятия текста при чтении.** – Стратегии восприятия текста при чтении лежат в основе практического знания иностранного языка. Для того чтобы студенты легче и быстрее воспринимали прочитанное, преподаватель должен правильно направлять этот процесс. В статье отмечены шаги восприятия текста при чтении, которые рассматриваются по отдельности. Для каждого шага отмечаются не только ожидаемые результаты, но и система необходимых упражнений для осуществления этих шагов. Представленные в статье стратегии не ограничиваются рамками одного языка. Несмотря на то, что основным базовым материалом послужил английский язык, их можно применять при работе над текстом на любом иностранном языке.

**Ключевые слова:** разновидности чтения, познавательное чтение, обучающее чтение, поисковое чтение, восприятие текста

**L. HAYTYAN – On Reading Comprehension Strategies.** – Reading comprehension strategy teaching techniques have a great role in the language learning process. To make it easier for the students to comprehend the text, the teacher should guide them, explain what strategies to use, why and when to use the strategies, and how to apply them. The steps of text comprehension are observed in the paper one by one. The system of necessary exercises to complete the steps are mentioned as well.

**Key words:** types of reading, scanning/global reading, detailed reading, selective reading, reading comprehension

**ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ**  
**СОДЕРЖАНИЕ**  
**CONTENTS**

**ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ/Лингвистика/Linguistics**

|  |    |
|--|----|
| ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Ս., ԲԱԳՈՒՄՅԱՆ Լ. Քենեթ Գրեհեմի «Քամին ուռիների մեջ» ստեղծագործության շրջադասությունները (ինվերսիան) և դրանց հայերեն թարգմանության խնդիրը .....  | 3  |
| ГАБРИЕЛЯН С., БАГУМЯН Л. Стилистическая инверсия в произведении Кеннета Грэма «Ветер в ивах» и проблема его перевода на армянский язык<br>GABRIELYAN S., BAGUMYAN L. Stylistic inversion in Kenneth Grahame's "The Wind in the Willows" and the problem of its translation |    |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա. Համընդհանուր դարձվածային միավորների լեզվամշակութային, թարգմանական տարբերակները և դրանց հոգևոր իմաստները .....   | 11 |
| ГРИГОРЯН А. Лингвокультурные, переводческие варианты универсальных фразеологических единиц и их духовные значения<br>GRIGORYAN A. Linguocultural, translational options of universal phraseological units and their spiritual meanings                                     |    |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ Ք., ԹՈՎԱՍՍՅԱՆ Լ. Համակարգչային եզրերի համարժեքների ստեղծումը և համակարգչային եզրաբանության զուգաձևությունների վերացման եղանակները հայերենում .....   | 18 |
| ГРИГОРЯН К., ТОВМАСЯН Л. Методы создания компьютерных терминов на армянском языке и способы исключения терминов-эквивалентов<br>GRIGORYAN Ch., TOVMASYAN L. The creation of computer terms in the Armenian language and means for eliminating term variations              |    |
| ԵՐԶՆԿՅԱՆ Ե., ԳԱԶԱՐՅԱՆ Լ. Տաբու բառերը որպես հուզաստատկական բառերի առաջացման աղբյուր-դաշտ .....   | 30 |
| ЕРЗИНКЯН Е., ГАЗАРЯН Л. Табу как источники возникновения эмоционально-усилительных интенсификаторов<br>YERZINKYAN Y., GHAZARYAN L. Taboo words as a source domain for the development of intensifiers  |    |
| ԽԱՐԱԶՅԱՆ Հ. Սոցիալական գովազդը որպես հասարակական գիտակցության ձևավորման միջոց .....  | 36 |
| ХАРАЗЯН Е. Социальная реклама как средство формирования социального сознания<br>KHARAZYAN H. Public advertising as a means of developing social awareness  |    |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լ. Ժամանակի նշույթավորումը տնտեսական իրադարձություններում .....  | 42 |
| АРУТЮНЯН Л. Темпоральная маркированность экономических событий<br>HARUTYUNYAN L. Temporal markers of economic events   |    |
| ՄԵԼԻԿ-ԱԴԱՄՅԱՆ Շ. Անգլերենում գայրույթ հույզի որոշ իմաստային յուրահատկությունների մասին .....   | 53 |
| МЕЛИК-АДАМЯН Ш. О некоторых семантических особенностях эмоции «злость» в английском языке  |    |

|  |     |
|--|-----|
| MELIK-ADAMYAN SH. Some Semantic Peculiarities of the Emotion “Anger” in English<br>ՄԵԼԻԿ-ԱԴԱՄՅԱՆ Ս. Համատեքստը՝ որպես նույնարանական ասույթների ապա-<br>կողովորման միջոց .....  | 61  |
| MECPOПЯH A. O контекстуальной обусловленности декодирования тавто-<br>логических высказываний<br>MESROPYAN A. Context as the key to the calculation of tautologies<br>ՄՈՎՐՈՍՅԱՆ Տ. Ուղղաձիգ համատեքստը որպես լեզվարանական ուսում-<br>նասիրության առարկա .....  | 74  |
| МОВСИСЯН Т. Вертикальный контекст как объект лингвистического анализа<br>MOVSISYAN T. Vertical context as a subject of linguistic study<br>ԳԱԼՍՏՅԱՆ Ա. Когнитивные основы развития причинного значения в<br>семантике первообразных предлогов .....  | 80  |
| ԳԱԼՍՏՅԱՆ Հ. Պարզ կապերի պատճառական իմաստի զարգացման<br>ճանաչողական (կոգնիտիվ) նախադրյալները<br>GALUSTYAN H. Cognitive aspects of developing causative meaning in simple<br>prepositions<br>ГЕВОРГЯН К. Человеческая телесность в современной лингвистике:<br>соматизмы в языке и культуре .....  | 88  |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ Զ. Մարդկային մարմինը ժամանակակից լեզվաբանության<br>մեջ. սոմատիկ հասկացությունները լեզվում և մշակույթում<br>GEVORGYAN K. Human body in modern linguistics: somatisms in language and<br>culture<br>СИМОНЯН А. Искренность в политической коммуникации через призму<br>теории речевых актов .....  | 97  |
| ՍԻՄՈՆՅԱՆ Ա. Անկեղծությունը քաղաքական խոսույթում<br>SIMONYAN A. Sincerity and the speech acts used by the politicians   |     |
| <b>ՄԵԹՈԴԻԿԱ/Методика/ Methodology</b>  |     |
| НОВАКИМЯН L. TED Talks as a tool for enhancing listening comprehension ....<br>ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Լ. TED դասախոսությունները որպես լսել-ընկալելու հմտու-<br>թյունները զարգացնելու միջոց<br>ОВАКИМЯН Л. TED лекции как средство развития навыков аудирования<br>TOVMASYAN N., GHAZARYAN R. A plan of a film-based lesson for EFL<br>students of intermediate level ..... | 102 |
| ԹՈՎԱՍՏՅԱՆ Ն., ԳԱԶԱՐՅԱՆ Ռ. Ֆիլմ-դասի ծրագիր անգլերենը որպես<br>օտար լեզու դասընթացի համար<br>ТОВМАСЯН Н., КАЗАРЯН Р. К вопросу об использовании кино- и видео-<br>материалов при обучении английского как иностранного<br>ԱՄԻՐՅԱՆ Ա. Ինտերակտիվ դասերի կազմակերպումը որպես մասնագիտա-<br>կան նյութն օտար լեզվով առավել արդյունավետ յուրացնելու միջոց .....      | 119 |
| АМИРЯН А. Организация интерактивных занятий как способ продуктивного<br>усвоения профессионального материала<br>AMIRYAN A. The organization of interactive lessons as a productive means of<br>assimilation of the professional material   |     |

|  |     |
|--|-----|
| ԱՐՄԵՆՅԱՆ Լ. Իսպաներեն դարձվածքային միավորների ուսուցման ազգամշակութային հայեցակերպը լեզվական բուհում .....                 | 126 |
| АРСЕНЯН Л. Национально-культурный аспект обучения фразеологических единиц испанского языка в языковом вузе                 |     |
| ARSENYAN L. National-cultural aspect of learning Spanish phraseological units in a linguistic university                   |     |
| ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ Հ. Հաղորդակցական մեթոդի դերը իսպաներենի՝ որպես օտար լեզվի դասավանդման խնդրում .....                            | 136 |
| БАГДАСАРЯН А. Роль коммуникативного метода в преподавании испанского языка как иностранного                                |     |
| BAGHDASARYAN H. The role of communicative method in teaching Spanish as a foreign language                                 |     |
| ԲԱՐՍԵԳՅԱՆ Լ. Օտար լեզվի դասավանդման մեջ երաժշտությունն ինտեգրելու որոշ առավելությունների մասին .....                       | 144 |
| БАРСЕГЯН Л. О некоторых преимуществах интегрирования музыки в преподавании иностранного языка                              |     |
| BARSEGHYAN L. On some advantages of integrating music into foreign language teaching                                       |     |
| ՀԱՅԹՅԱՆ Լ. Ընթերցման միջոցով տեքստը ըմբռնելու ռազմավարությունների մասին.....   | 151 |
| АЙТЯН Л. О стратегиях восприятия текста при чтении   |     |
| HAITYAN L. On reading comprehension strategies   |     |
| ՆԻԿՈԳՈՍՅԱՆ Հ., ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Բ. Մշակութային իրազեկության դերը օտար լեզվի ուսուցման գործընթացում .....                        | 158 |
| НИКОГОСЯН Р., САРУХАНИЯН Б. Роль культурной грамотности в процессе преподавания иностранного языка                         |     |
| NIKOGHOSYAN H., SARUKHANYAN B. The role of cultural awareness in foreign language teaching                                 |     |
| ՉԱԼԱԲՅԱՆ Ս., ԳԱԶԱՐՅԱՆ Լ. Ուսանողակենտրոն ուսուցման կարևորությունն օտար լեզուն հատուկ նպատակների համար դասընթացում .....    | 165 |
| ЧАЛАБЯН С., КАЗАРЯН Л. О важности лично-ориентированного обучения иностранному языку для специальных целей                 |     |
| CHALABYAN S., GHAZARYAN L. The importance of learner-centered approach to teaching foreign languages for specific purposes |     |
| БАГДАСАРЯН М., КОЧАРЯН С. К вопросу о преподавании иностранных языков в вузовской системе Армении .....                    | 170 |
| ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ Մ., ՔՈՉԱՐՅԱՆ Ս. Հայաստանի բուհական համակարգում օտար լեզուների դասավանդման հարցի շուրջ                          |     |
| BAGHDASARYAN M., KOCHARYAN S. On the issue of teaching foreign languages in higher education establishments of Armenia     |     |

## **ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ/Литературоведение/ Literary Criticism**

|   |     |
|---|-----|
| ԱՌԱՔԵԼՅԱՆ Ա. Ֆրանց Կաֆկայի «Օրագրերի» կառուցվածքը .....   | 178 |
| АРАКЕЛЯН А. Структура «Дневников» Фр. Кафки   |     |
| ARAKELYAN A. The structure of Franz Kafka’s “Dairies”   |     |
| ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ Վ. Ամերիկյան «բիթնիկական շարժման» ազդեցությունը<br>Չ. Բուկովսկու գեղարվեստական արձակի վրա .....               | 183 |
| ХАЧАТУРЯН В. Формирование художественного мира Чарльза Буковского и<br>американское «битническое движение»                |     |
| KNACHATURYAN V. Development of Charles Bukowski’s literary outlook and<br>the American “beat movement”                    |     |
| ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Վ. Դ.Հ. Լոուրենսի՝ «արյան գիտակցության» ըմբռնումը....  | 189 |
| ОГАННЕСЯН В. Восприятие «сознания крови» у Д. Г. Лоуренса   |     |
| HOVHANNISYAN V. D.H. Lawrence’s perception on “blood-consciousness”   |     |
| ՍԱԿԱՐՅԱՆ Ա. Կառլո Գոլդոնի և Հակոբ Պարոնյան («Երկու տիրոջ ծառան»)<br>նույնանուն պիեսների համեմատական վերլուծություն).....  | 196 |
| МАКАРЯН А. Карло Гольдони и Акоп Паронян (сопоставительный анализ<br>одноименных пьес под названием «Слуга двух господ»)  |     |
| MAKARYAN A. Carlo Goldoni and Hakob Paronyan (comparative analysis of the<br>namesake plays “The Servant of Two Masters”) |     |
| ՊԵՏՐՈՍՅԱՆ Ր. Փիլիսոփայական վեպի կառուցման սկզբունքներն ու<br>առանձնահատկություններն ըստ Միգել դե Ունամունոյի .....        | 209 |
| ПЕТРОСЯН Р. Принципы и особенности построения философского романа<br>по Мигелю де Унамуну                                 |     |
| PETROSYAN R. The principles and features of the construction of philosophical<br>novel according to Miguel de Unamuno     |     |
| Տեղեկություններ հեղինակների մասին .....   | 217 |
| Сведения об авторах   |     |
| Information on the contributors   |     |